

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿՐԱՍՏԱՆՈՒՄ

ՄԵԾԱՐԵՅԻՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ



Նոյեմբերի 5-ին Կրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի ցուցասրահների դահլիճում կայացավ Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված երեկո:

Միջոցառմանը, որը կազմակերպել էր Կրաստանում 33 դեսպանությունը՝ «Կովկասյան տուն» մշակութային կապերի կենտրոնի հետ համագործակցությամբ, ներկա էին Կրաստանի խորհրդարանի անդամ Սամվել Պետրոսյանը, Կրաստանի նախագահի խորհրդակցական «Կրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրյանը, Թբիլիսիում ազգային փոքրամասնությունների՝ հրեա, քուրդ, գերմանական, լատվիական, էստոնական եւ այլ համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև վրաց մտավորական եւ հասարակական գործիչներ:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 5-ին Կրաստանում 33 դեսպանության, 33 Սփյուռքի նախարարության ու Կրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ, Թբիլիսիի «Հայարտուն» մշակութային կենտրոնում կայացավ «Թբիլիսիի սովերներ» խորագրով Հայաստանի եւ Կրաստանի մի խումբ երիտասարդ նկարիչների համատեղ պլեների արդյունքում ստեղծված աշխատանքների ցուցահանդեսը:



Նոյեմբերի 5-ին Կրաստանում 33 դեսպանության, 33 Սփյուռքի նախարարության ու Կրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ, Թբիլիսիի «Հայարտուն» մշակութային կենտրոնում կայացավ «Թբիլիսիի սովերներ» խորագրով Հայաստանի եւ Կրաստանի մի խումբ երիտասարդ նկարիչների համատեղ պլեների արդյունքում ստեղծված աշխատանքների ցուցահանդեսը:

Միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից ժամանած տասնմեկ երիտասարդ արվեստագետներ, իրենց համախոհ վրացի վեց նկարիչների հետ միասին, միջոցառման 5 օրերի ընթացքում հնարավորություն ունեցան գտնվել Կրաստանի գեղատեսիլ շրջաններում եւ կտավին հանձնել աշխատանքները գունազեղ պատկերները, որոնք ներկայացված էին եզրափակիչ ցուցահանդեսում:

Նախաձեռնության հեղինակների՝ թբիլիսահայ երիտասարդ ստեղծագործողներ Լանա Բաբայանի եւ Գայանե Մանասյանի մտադրությամբ ստեղծված «InterArtBridge» հասարակական կազմակերպության նպատակներից մեկը մշակույթի միջոցով տարբեր երկրների երիտասարդ ստեղծագործողների մերձեցումն ու համագործակցությունն է:

ԿԻՆՈ

Գ.ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ «ՊԵՊՈ»-Ի ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՆԿԱՐԱՎՈՐՈՒՄԸ



Կանի փետրվարը:

Կինոժապավենի սցենարի հեղինակն ու պրոդյուսերը ժիրայր Հակոբյանն է: «Նոր տարբերակն առաջին էկրանավորմանը կրկնելու փորձ չի լինելու: Ես չեմ փորձում համեմատվել Համո Բեկնազարյանի հետ, ավելին՝ ես այդքան չկամ էլ»: - ասաց նա: Ստեղծագործական խումբը նպատակ չունի գերազանցել վաղուց արդեն դասական արժեք դարձած եւ սիրված կինոաշխատանքը, փոխարենը սա սուներոկյանական ոճով արդիական թեմային նոր անդրադարձ է:

ԵՎ ՆԿԱՐԱՎՈՐՈՒՄԸ

Գաբրիել Սունդուկյանի «Պեպո»-ն նորովի կնկարահանվի. հայաստանյան կինոարտադրությունում հանդիսատեսին իր դեմոկրատիկ ֆիլմերով ծանոթ Getrik Production կինոընկերության նախաձեռնությամբ հաշված օրեր անց կմեկնարկի լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի նկարահանման աշխատանքը: Ֆիլմի մեծ էկրանին հայտնվելու ժամկետը նախանշված է 2014 թվականի փետրվարը:

«Սուրբ Խաչն առանց խաչի» ֆիլմով: Ի տարբերություն այլ ֆիլմերի՝ «Պեպո»-ն փառատոնային ընթացք չի կանխագուշակում, փոխարենը հեղինակները շեշտում են, որ այն առաջին հերթին հայ հասարակության համար նկարահանվող ֆիլմ է: Լիամետրաժ ֆիլմի նկարահանման աշխատանքները կմեկնարկեն Օշականում, հնարավոր է, որ դրանք առաջիկայում ընդգրկեն նաև Կրաստանը: Ռեժիսոր Համո Բեկնազարյանի կողմից նկարահանված «Պեպո» ֆիլմի պրեմիերան տեղի է ունեցել 1935 թվականի հունիսի 15-ին: «Պեպո»-ն համարվում է առաջին հայկական հնչյունային ֆիլմը՝ հիմնված Գաբրիել Սունդուկյանի համանուն պիեսի վրա: Ֆիլմում հնչում է Արամ Սաչատրյանի հեղինակած երաժշտությունը: Գլխավոր դերակատարը եւ աղբատ ձկնորս Պեպոյին մարմնավորող մեծանուն դերասան Հրայր Լեւոնյանն է, իսկ խարոսի առեւտրական Ջիզիմովի դերում Ավետ Ավետիսյանն էր: ՏԱՅԵՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՐՈԳԵԿՈՐ ԿԱՍՈՒՐՉՆԵՐ

ՆԿԻՐՎԱԾ ԷՐ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿԻ ՀԻՇՆԱԿԻՆ



Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի արեւելագիտության ինստիտուտում, նոյեմբերի 14-15-ին, տեղի ունեցավ համալսարանի հայագիտության բաժնի հիմնադիրներից մեկի՝ ժամանակի ակնառու մտավորական, հայագետ, արեւելագետ, պրոֆեսոր, համալսարանի երկարամյա դասախոս Լեւոն Մելիքսեր-Բեկի (1890-1963) հիշատակին նվիրված գիտական կոնֆերանս, որը նախագահում էր արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր, Կրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Ապրիլ Սիլազադեն:

Իրենց ողջունյի խոսքում Ապրիլ Սիլազադեն, Կրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Ջազա Ալեքսիձեն, Իվ.Ջավախիշվիլու համալսարանի հունամիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Դարեջան Թվալվաձեն միջոցառումը գնահատեցին իբրև անվանի գիտնականի համալսարանի պատմության մեջ ներդրած մեծ ավանդի արժանի հատուցում: Լեւոն Մելիքսեր-Բեկի անսահման բարոյության, ազնվության մասին եւ՝ նրա մարդկային այլ հատկանիշները վեր

հանող հուշերով, հանդես եկան պրոֆեսորներ Նաթելա Կուրեչիան, Ջեզվա Մեղուլաշվիլին, Նոնադի Բարթախան, Յիսանա Ամբուլաձեն, բանաստեղծ, բարձրագույն Գիլի Շահնազարը: Կրաստանի նախագահի խորհրդակցական «Կրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրյանը ողջունելով միջոցառման նախաձեռնողներին կոչեց շարունակել Մելիքսեր-Բեկի գիտնականի ու մարդու կենսակերպը, որ իմաստավորված էր վրաց ու հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գաղափարներով: Կոնֆերանսի 2-րդ բաժնում

պրոֆեսորներ Բոնդո Արվելաձեն, Քեթևան Ասաթանյան, Մարիան Զխարտիշվիլին, Նոնադի Բարթախան հանդես եկան «Լեւոն Մելիքսեր-Բեկի կյանքն ու գործունեությունը», «Ազգային արխիվում պահպանված Լեւոն Մելիքսեր-Բեկի արխիվը», «Ազգի կոնցեպտուալիզացիայի երկու մոդելի՝ ազգի եւ ժողովրդի մասին», «Սայաթ-Նովայի վրացական բանաստեղծություններում որոշ պարսկական փոխառությունների մասին» թեմաներով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂՆԱՅԱ

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՍԸՆԴԱՆՈՒՐ ՄԱՐԴԱՆԱՍԱՐԻՆ



Նախարար Դավիթ Նարմանիան եւ վիճակագրության ազգային գործակալության գործադիր տնօրենի պաշտոնակատար Թեմգիզ Ցակվաձեն, այդ գործընթացը մայրաքաղաքում կշարունակվի երկու շաբաթ:

Թբիլիսիում սկսվել են բնակչության համընդհանուր մարդահամարի նախապատրաստական աշխատանքները:

Ի ն չ - «2014 թվականին բնակչության ընդհանուր մարդահամարի նախապատրաստական աշխատանքներն արդեն անցկացվել են Աջարիայում, Գուրիայում եւ Կախեթիում: Այսօր դրանք մեկնարկում են մայրաքաղաքում: Նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Թբիլիսիում կկազմվի շենքերի եւ դրանցում ապրող ընտանիքների ցուցակը: Դրա համար նախապատրաստվել են 800 գրանցողներ, որոնք 14 օրվա ընթացքում այդ աշխատանքը կիրականացնեն»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան: Ընդհանուր առմամբ, բնակչության մարդահամարի անցկացման գործընթացին մասնակցելու է 4 հազար գրանցող:

ՎԱՐՉԱՎԱՆ

ԿՆՎԱԶԵՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

Կրաստանի ներքին գործերի նախարար Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնությամբ, նվազեցվում են Կրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքով նախատեսված տուգանքների չափերը:

Այդ նախաձեռնության արդյունքում, ծագեց օրենսդրական մի շարք փոփոխությունների կատարման անհրաժեշտություն, որի նպատակն է նվազեցնել տուգանքների չափերը եւ վարորդական իրավունքից զրկման ժամկետները: Մասնավորապես, օրինախախտողի համաձայն, օրենսգրքի 125-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արագության գերազանցման տուգանքը՝ 100 լարին, կկիսվի եւ կկազմի 50 լարի: Վերոնշյալ տուգանքը չվճարելու դեպքում, ներկա դրությամբ գործող 500 լարիանոց պատժամիջոցը նվազեցվում է մինչեւ 150 լարի: Դրա խախտման դեպքում, իրավախախտը, երկու տարվա փոխարեն, վարորդական իրավունքից զրկվում է վեց ամսով, իսկ վարորդական իրավունքը իրավասու կլինի վերականգնել՝ 1500 լարի փոխարեն 500 լարի տուգանք վճարելով: Օրենսգրքի 125-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, մեքենայի կանգ-

նեցման կանոնների խախտման դեպքում, նախատեսված է 10 լարիի տուգանք, որա չվճարման դեպքում՝ 150 լարիի



մաքս: ՆԳ նախարարության նախաձեռնությամբ, վերոնշյալ խախտման տուգանքի չվճարելու դեպքում, մեկ տարվա փոխարեն, իրավախախտը վարորդական իրավունքից զրկվում է վեց ամսով, իսկ վարորդական իրավունքը նա ի վիճակի կլինի վերականգնել՝ 1000 լարի փոխարեն 500 լարի մուծելով: Նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն, առանցքային գծի հատման համար նախատեսված 100 լարիի տու-

գանքը կիսվում է: Տուգանքը չվճարելու դեպքում, 500 լարիի փոխարեն, իրավախախտը ստիպված կլինի մուծել 150 լարի: Սահմանված ժամկետներում մուծումները չիրականացնելու դեպքում, վարորդը երկու տարվա փոխարեն, վարորդական իրավունքից կզրկվի մեկ տարով, թեպետ, 1500 լարիի փոխարեն 500 լարի մուծելով, նա կվերականգնի վարորդական իրավունքը: 200 լարիից մինչեւ 100 լարի նվազեցվում է նաև առանցքային գծի հատման կրկնակի խախտման դեպքում: Սահմանված ժամկետում տուգանքի չվճարման դեպքում, երկու տարվա փոխարեն, իրավախախտը վարորդական իրավունքից զրկվում է մեկ տարով, թեպետ դա կարող է վերականգնել՝ 1500 լարիի փոխարեն 1000 լարի մուծելով: Կրկնակի նվազում են տուգանքները եւ վարորդական իրավունքից զրկվելու ժամկետները Կրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքի 116, 147, 1182, 1183, 119, 120, 123, 125, 127 եւ 1271 հոդվածներով նախատեսված իրավախախտումների համար:



ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ



Այցի շրջանակներում՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, հայկական երկու հան-

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՒ ԼՂՀ

Նոյեմբերի 12-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով եղավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Րապատությունների պաշտպանության նախարարների եւ գինված ուժերի բարձրաստիճան հրամանազմի ներկայացուցիչների հետ Սերժ Սարգսյանն այցելեց պաշտպանության բանակի մի շարք զորամասեր, ծանոթացավ գինված ուժերի մարտական պատրաստության ու բանակաշինության ընթացիկ աշխատանքներին:

Հայկական երկու հանրապետությունների նախագահները նոյեմբերի 13-ին ներկայ գտնվեցին Պաշտպանության բանակի զորավարություններին: Նախագահները դիտեցին տանկային երկամարտը եւ այլ ստորաբաժանումների գործողությունները: Զորավարություններում բարձր արդյունքներ արձանագրած մի խումբ գինվածաշարժների արժեքավոր նվերներ հանձնվեցին:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Հայաստանի Ազգային ժողովը միաձայն ընդունեց Եվրոպական միության հետ արտոնագրերի դյուրացման մասին համաձայնագիրը: Խորհրդարանում ներկա 108 պատգամավոր կողմ քվեարկեց համաձայնագրի վավերացմանը:

ԵՄ-ի հետ արտոնագրերի դյուրացման մասին համաձայնագրով Հայաստանի քաղաքացիների համար նախատեսվում են Շենգենյան գոտու երկրներ նույն փոխանցման արտոնագրեր: ԵՄ երկրներ պարզեցված մուտք է նախատեսվում մի շարք կատեգորիաների քաղաքացիների համար, մասնավորապես՝ պաշտոնական պատվիրակու-

թյան անդամների, գիտնականների, ուսանողների, լրագրողների, արվեստի եւ սպորտի դործիչների, ԵՄ երկրներում օրինական բնակություն ունեցողների մերձավոր ազգականների, ԵՄ երկրներում գործող հայկական սփյուռքի կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումների մասնակիցների համար: Նախատեսվում է նվազեցնել նաեւ Շենգենյան մուտ-

քի արտոնագրի գինը՝ դարձնելով 35 եվրո, ինչպես նաեւ այն դարձնել անվճար մի շարք կատեգորիաների քաղաքացիների, այդ թվում՝ երեխաների եւ թոշակառուների համար: Վիզան տրամադրվում է դիմումը տալուց հետո երկու շաբաթվա ընթա-



ցքում, որոշ անհետաձգելի դեպքերում կարող է տրամադրվել երկու օրվա ընթացքում: Փաստաթղթի շրջանակում կգործի նրա իրականացման նկատմամբ մոնիտորինգի մեխանիզմը:

ՆԵՐՎԱՅԱՎԵՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Խորհրդակցության ժամանակ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը ներկայացրեց վերջին տարիներին նախարարության

Նոյեմբերի 8-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Տարածքային կառավարման նախարարությունում անցկացրեց խորհրդակցություն ղեկավար անձնակազմի հետ՝ տարածքային կառավարման նախարարության գործունեության հիմնական ուղղություններով իրականացված աշխատանքների ու խնդիրների վերաբերյալ, հանդիպման ավարտին պատասխանեց նաեւ նախարարության աշխատակիցներին հետաքրքրող հարցերին:

համակարգի գործունեության վերաբերյալ իր նկատառումները, անդրադառնալով հատկապես աշխատանքի երեք հիմնական ուղղություններին. առաջին՝ իրավական (օրենսդրական դաշտի ամբողջականացում, համապատասխան օրենքների եւ իրավական ակտերի նա-

խագծերի մշակում ու ընդունում), երկրորդ՝ ծրագրային եւ հայեցակարգային մոտեցումների մշակում, երրորդ՝ վարչարարության եւ ամենօրյա ընթացիկ աշխատանքների իրականացում: Խորհրդակցության արդյունքները հանրագումարեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

ՑՈՐԵՆԻ ՆԵՐԿՐՈՒԽԸ ԿՐՃԱՏՎԵԼ Է 48 ՏՈԿՈՍՈՎ, ԻՍԿ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱՋԱՆՈՒԽԸ ԿՐԿՆԱՊԱՏՎԵԼ Է

Հայաստան ներմուծվող ցորենի ծավալը հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 48,39 տոկոսով եւ կազմել 201 հազար 717 տոննա:

Հայաստանի կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ նախորդ տարվա առաջին ինն ամիսներին Հայաստան է ներմուծվել 390 հազար 854 տոննա ցորեն, իսկ ամբողջ 2012թ.՝ 477 հազար 681 տոննա: Ի՞նչ ամիսներին Հայաստան բերված ցորենի հիմնական ծավալը Ռուսաստանից է (184,2 հազար տոննա), Ուկրաինայից (14,1 հազար տոննա) եւ Բուլղարիայից (3,1 հազար տոննա): Ներկրված ցորենի մաքսային ընդհանուր արժեքը գերազանցել է 65 միլիոն դոլարը: Ընթացիկ տարում Հայաստանից ցորեն չի արտահանվել:

Հայաստանի Հանրապետության ցորենի ներքին պահանջարկը տարեկան մոտ 700 հազար տոննա է: Վերջին տարիներին Հայաստանում ցորենի համախառն բերքի ծավալները դրսևորում են աճի միտում: 2010թ. Հայաստանում ստացվել է 183,5 հազար տոննա ցորենի բերք, 2011թ.՝ 224,1 հազար տոննա, 2012թ.՝ 243 հազար, իսկ այս տարի՝ 307 հազար տոննա: Հայաստանից սիգարետների արտահանման ծավալը հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 2 անգամ եւ կազմել 4 միլի-

արդ 499 միլիոն 300 հազար հատ (շուրջ 225 միլիոն տոկոս): Արտահանված ծխախոտը կազմել է Հայաստանում արտադրված ողջ ծավալի 81,5 տոկոսը: Հայաստանի կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ հայկական ծխախոտի խոշորագույն գործը այս տարվա ինն ամիսներին Իրաքն է (3 միլիարդ 150 միլիոն հատ), այնուհետեւ՝ Թուրքմենստանը (494,3 միլիոն հատ), Վրաստանը (287,4 միլիոն հատ), Սիրիան (244,6 միլիոն հատ), Արաբական Միացյալ Եմիրությունները (132,6 միլիոն հատ), Ռուսաստանը (77,8 միլիոն հատ): Հայկական ծխախոտը գնում են



նաեւ Շվեդիան, Հորդանանը, Ավստրալիան, Կորեան, Սինգապուրը եւ այլ երկրներ: Ուշագրավ է, որ հունվար-սեպտեմբերին Սիրիան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի քան 14 անգամ ավելացրել է Հայաստանից ծխախոտի ներմուծումը: Այս տարվա ինն ամիսներին մեր երկրից արտահանված ծխախոտի մաքսային ընդհանուր արժեքը գերազանցել է 50 միլիոն դոլարը:

ՍԿՎՈՒՄ Է ԲՈՒՅԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում որակյալ եւ արդյունավետ կրթություն ապահովելու համար կառավարությունը գնում է բուհերի խոշորացման ճանապարհով: Այս մասին Ազգային ժողովում կառավարության հետ հարց ու պատասխանի ժամանակ տեղեկացրեց Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Վարչապետի խոսքով՝ կրթության ոլորտում այս նոր քաղաքականությունն իրականացվում է մի նպատակով՝ բուհերը դարձնել արդյունավետ ու որակյալ: «Ես վստահեցնում եմ, որ սրա հետեւանքով ոչ մի ուսանող չի տուժելու, ընդհակառակը՝

նրանց համար ստեղծվում է բարձր մակարդակի կրթություն ստանալու համար անհրաժեշտ միջավայր», - ընդգծեց Տ.Սարգսյանը: Անդրադառնալով Վանաձորի ճարտարագիտական համալսարանի հարցին, որը

նախատեսվում է լուծարել, Հայաստանի վարչապետն ընդգծեց, որ այդ հարցի շուրջ նախարարությունը հանրային լուումներ է կազմակերպել, որին մասնակցել են բոլոր շահագրգիռ կողմերը: Նա նշեց, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարին եւս մեկ անգամ կհանձնարարի հանրային լուումներ կազմակերպել եւ պատասխանել բոլոր հարցերին, որոնք կվերաբերեն համալսարանի ուսանողների եւ դասախոսների, ինչպես նաեւ շենքի ապագային:

ԸՆԵՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԵՉՎՈՂ ՀԱՐՅՆԵՐ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է աշխատանքային այցով Հայաստան ժամանած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱԴԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային: Հանդիպման ընթացքում գրույակիցները քննարկել են ՀԱԴԿ շրջանակներում համագործակցությանը վերաբերող հարցեր: Քննարկվել է նաեւ այս տարվա սեպտեմբերի 23-ին Սոչիում կայացած ՀԱԴԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանում ընդունված որոշումների իրագործման ընթացքը:

ՎԼԵՍՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՍԵԼՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ Մարսելի քաղաքապետ, սենատոր Ժան-Կլոդ Գոդենը նոյեմբերի 8-ին մասնակցել են Մարսելում Հայաստանի գլխավոր հյուպատոսության բացման հանդիսավոր արարողությանը, որին ներկա էին Ֆրանսիայի խորհրդարանականներ, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչներ, հայ համայնքի անդամներ: Մարսելում նորաբաց գլխավոր հյուպատոսությունը կղեկավարի Վարդան Սրմաբեշը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԹՅՆ ԵՄ ՀԵՐԱԾՈՒՆ ԱՖՊԱՆՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի զինված ուժերի խաղաղապահ առաքելության 55 զինծառայողից բաղկացած նոր հերթափոխը կմեկնի Աֆղանստան: Խաղաղապահ ուժերի նոր հերթափոխը կմեկնի Գերմանիա դասընթացների, իսկ դեկտեմբերի կեսերին կուղևորվի Աֆղանստան՝ պաշտպանելու Մազարի Շարիֆի օդանավակայանը: 2010 թվականի փետրվարից Հայաստանի ՁՈՒ ստորաբաժանումը (մեկ դասակ) ընդգրկվել է Գերմանիայի հրամանատարության փակ գործող ՄԱՈՒ (Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժեր) (ISAF) հյուսիսային հրամանատարության կազմում եւ իրականացնում է Կունդուզ քաղաքի օդանավակայանի անվտանգության ապահովման խնդիրները, հեղափոխում զորախումբն ընդլայնվել է եւ գործողվել նաեւ Մազարի Շարիֆ: Մինչեւ Աֆղանստան մեկնելը հայկական զորախումբը 3-4 շաբաթյա նախադեղակայման վարժանք է անցնում Գերմանիայում:

ԳՅՈՒՊԱՔԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ ՆԵՐՎԱՅԱՎՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԽՆՎԻՐՆԵՐԸ

Գյուղաբնակ երիտասարդների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելուն միտված «Սեկնարկ» ծրագրին մասնակցում է գյուղաբնակ 25 երիտասարդ Հայաստանի մարզերից, Արցախից եւ Զավախեթից: Հայաստանի նախագահի կողմից փրված դրամաշնորհի շրջանակում Ծաղկաշորում ծրագիրն իրականացվում է նոյեմբերի 12-17-ը: Սեմինարի ընթացքում կքննարկվեն գյուղաբնակ երիտասարդության հիմնախնդիրները, լուծման փորձերակներն ու մեթոդները: Մասնակիցները կստանան չեռնարկափրական գործունեության, ֆինանսների կառավարման, օրենսդրության մասին գիտելիքներ, կծանոթանան տեղական եւ միջազգային կառույցների գործունեությանը, իրականացվող երիտասարդական ծրագրերին: Ծրագիրն իրականացնում է երիտասարդական ակումբների դաշնությունը (FYCA), Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ, Հայաստանի նախագահի կողմից փրված դրամաշնորհի շրջանակում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

21.11.2013. Տոն երեքամյա Սուրբ Աստվածածնին տաճարի ընծայման



Կույս Մարիամին նվիրված տոներից է Երեքամյա Սուրբ Աստվածածնին տաճարի ընծայման տոնը, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին:

Ըստ ավանդության՝ երեք տարին լրանալուց հետո, Տիրամոր աստվածավախ ու բարեպաշտ ծնողները՝ Հովակիմն ու Աննան, իրենց ուխտի համաձայն, Մարիամին ընծայում են տաճարին, ուր մա մնում է մինչեւ նշանվելը:

23.11.2013. Գրիգոր Եւ Նիկողայոս Աբանջելագործ Հայրապետների Եւ Սյունոն եպիսկոպոսի հիշատակության օր

ՐՈՒՇ ԵՐԵՎՈՒ

ՍԱՐԳԻՍ ԳԱՐՉԻՆՅԱՆԻ «ԹԻՖԼԻՍ. ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՂՍԿԱՐՆԵՐ» ԳՐՔԻ ԸՆԴՈՒՄԵՆ

Նոյեմբերի 8-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնում կայացավ Սարգիս Գարչինյանի «Թիֆլիս. Հայկական ճեպանկարներ» գրքի շնորհանդեսը:



Գ ի թ ը ը հրատարակվել է հայաստանյան «Լոռվա ծոր» հայրենակցական միության աջակցությամբ:

Շնորհանդեսի մեկնարկին ներկայացրել են ընդհանուր առմամբ հարգեցին Սարգիս Գարչինյանի հիշատակը:

Միջոցառմանը ներկա էին եւ խոսքով հանդես եկան հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի ղեկավար Սամվել Կարապետյանը, «Լոռվա ծոր» հայրենակցական միության նախագահ Սերգեյ Երիցյանը եւ ուրիշներ:

Միջոցառումը զուգորդել էր Սարգիս Գարչինյանի մահվան 40 օրվան:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՊԱՏԱ ՉԱՔԱՐԵԻՆԿՎԻՒ. «ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՍՈՉԻ ՄԵԿՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՉՈՒՆԻ»

Վրաստանի վերահստեղծման պետության Պատասխանատու Պատասխանատու Չաքարեիչվիլին հիմնախնդիրներ չի տեսնում Սոչիի օլիմպիական խաղերին Վրաստանի պետական պատվիրակության ուղեւորության հարցում:

Նրա խոսքերով, նախնական եզրակացություններից պետք է խուսափել, իսկ կառավարության կողմից պետք է ընդունվի «խեղձ» եւ հավասարակշռված որոշում:

«Օլիմպիական կոմիտեն ընդունել է որոշում՝ մասնակցելու օլիմպիական խաղերին: Այսինքն, եթե ոչինչ չպատահի, մենք օլիմպիական կմասնակցենք: Սակայն դա չի նշանակում, որ մենք անպայման կմեկնենք, եթե ինչ-որ բան փոխվի եւ իրավիճակը սրվի: Այդ ժամանակ մենք հարցը կվերանայենք: Իսկ ինչ վերաբե-

րում է նախագահին, ապա, եթե օլիմպիական մեկնարկներ վաղը եւ ինձ հարցնեին, ապա ես կասեի, որ գերադասելի կլիներ, եթե մեկնեիր: Սակայն, ինչ կպատահի փետրվարին, վստահությամբ ասել չեմ կարող, ուստի այսօր ասում եմ, եկեք սպասենք»,- հայտարարեց Պատասխանատու Չաքարեիչվիլին:



ԿԻՆՈՓԱՆԱՏՈՆ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»-Ը ՀՅՈՒՐԵԿՎԱԿԵՑ ԶՎԱՍԽԵԹՈՒՄ



«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնը արդեն 6-րդ անգամ հյուրընկալվեց Ջավախեթիում: «Ոսկե ծիրանը անիվների վրա» ծրագրի շրջանակներում, նոյեմբերի 8-9-10-ը, Ախալքալաքիում ցուցադրվեցին կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին, ինչպես նաեւ Վրաստանի ազգային կինոկենտրոնի կողմից վերջին տարիներին ստեղծված լավագույն ֆիլմերը:

Նոյեմբերի 9-ին, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տեղի ունեցավ փառատոնի հանդիսավոր բացման արարողությունը:

Փառատոնի բացմանը ելույթ ունեցան Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանը, փառատոնի նախագահ Հարություն Խաչատրյանը:

«Ոսկե ծիրանը» Ջավախեթիում կինոփառատոնը իրականացվում է «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի, Հայաստանի վրաստանի դեսպա-

նության, Վրաստանի ազգային կինոկենտրոնի հետ համագործակցությամբ:

Նոյեմբերի 8-ին հանդիսատեսի դատին ներկայացվեցին «Փարաջանով», նոյեմբերի 9-ին «Ընդհատված մանկություն», «Ջավախք, հավերժական հայրենիք», «Ժպտացեք», «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» ֆիլմերը, իսկ նոյեմբերի 10-ին «Հայկական անիմացիա-75» մուլտիպլիկացիոն է «Առիպես ճերմակ» ֆիլմը:

Ախալքալաքիում «Ոսկե ծիրան» կինոփառատոնը եզրափակվեց՝ «Եթե բոլորը...» կինոնկարով:

ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ Ե ԸՆՈՐՀՎԵԼ 400-ԻՆ

Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրո Բարնովը, իր պաշտոնաթողության նախօրեին, նոյեմբերի 15-ին, հանդես եկավ հայտարարությամբ:

Ըստ Անդրո Բարնովի, Վրաստանի նախագահը բավարարել է Վրաստանի քաղաքացիություն ցանկացող շուրջ 400 անձանց խնդրանքը եւ նրանց Վրաստանի քաղաքացիություն է շնորհել: Բարնովի պարզաբանմամբ, ժամանակի սղության պատճառով վերջնականապես որոշվեց վերոնշյալ 400 անձանց քաղաքացիության հարցը, իսկ մյուսների (մոտ 4000) դիմումներն ուղարկվելու են համապատասխան գերատեսչությանը: Անդրո Բարնովի խոսքերով, այսօր նոյեմբերի 16-ին, ժամը 12-ից նախագահի Հավաքարի նստավայրում հայտարարվում է բաց դռների օր եւ իրականացվողները կարող են դիտել այն:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ



Նոյեմբերի 9-ին Վրաստանում մեկնարկեց ազգային ուսումնական օլիմպիադայի առաջին փուլը:

2013-2014 ուսումնական տարում ազգային օլիմպիադան կանցկացվի մաթեմատիկայից, վրաց լեզու եւ գրականությունից, ոչ վրացական դպրոցների աշակերտների համար՝ վրաց լեզու եւ գրականությունից, պատմությունից, աշխարհագրությունից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից եւ օտար լեզվից (անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն):

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես վշտակցում են հաժակ եփրիկյանին, քրոջ՝ Գինո Բարդուղիմեոսի ԵՓՐԻԿՅԱՆԻ մահվան առթիվ եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքին ու հարազատներին:

Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 55.

Advertisement for 'VRASTAN' newspaper, including contact information and a list of subscribers.

Advertisement for 'VRASTAN' newspaper, contact info: 0105, 2990-739, 2990-774.

Advertisement for 'VRASTAN' newspaper, contact info: 0105, 2990-739, 2990-774.

Advertisement for 'VRASTAN' newspaper, contact info: 0105, 2990-739, 2990-774.

Advertisement for 'VRASTAN' newspaper, contact info: 0105, 2990-739, 2990-774.